ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
28. 10.2024թ. կայացած նիստի
թիվ 3 արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ

1.Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս.Գասպարյանի՝ 2023-2024 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

2. 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսանողների հարցման արդյունքների ամփոփում:

3.Ուսանողների արտադրական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկում:

4.Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստին 36 անդամներից ներկա էին 30-ը: ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և ներկայացրեց օրակարգի առաջին հարցը՝ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս.Գասպարյանի՝ 2023-2024 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս.Գասպարյանի՝ 2023-2024 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս.Գասպարյանը նշեց,որ հաշվետու ժամանակահատվածում անգլիական բանասիրության ամբիոնի աշխատանքները ընթացել են տարբեր ուղղություններով՝ ուսումնական և ուսումնամեթոդական, գիտական և գիտամեթոդական, գիտակազմակերպական և հրատարակչական, ինչպես նաև միջազգային համագործակցության գծով:

Ուսումնական և ուսումնամեթոդական գործունեության շրջանակում ամբիոնում վերանայվել և բարեփոխվել են բակալավրի և մագիստրոսիկրթական ծրագրերը ոչ միայն ըստ նոր ձևաչափի, այլ նաև բովանդակային առումով՝ որը հնարավորություն է տվել կրթական ծրագրերն առավել ամբողջացնելու և բազմակողմանիություն ապահովելու: Վերանայվել են ուսումնական գործընթացում կիրառվող դասագրքերի և լրացուցիչ գրականության ցանկերը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր կրթական ծրագրում ուսուցման հիմնանպատակի այս կամ այն փոփոխությունները: Նշված փոփոխությունները առաջ են քաշել նաև որոշակի դժվարություններ (ինչպես, օրինակ, առանձին դասընթացների միավորման անհրաժեշտություն, առանձին դեպքերում ավելի ընդհանրացված մատուցում, հետազոտական բաղադրիչի ներմուծման դեպքում ահռելի քանակի աշխատանքներ ստուգելու և գնահատելու դժվարությունները և այլն), սակայն ստեղծված դժվարությունները ժամանակի ընթացքում կհաղթահարվեն թե՛ ուսանողների և թե՛ դասավանդող դասախոսների մոտեցումները ադապտացնելու և առավել իրավիճակային դարձնելու շնորհիվ: Կարծում ենք, որ հետազոտական բաղադրիչի իրագործման դաշտում հատկապես մեծ հոսքերի հետ աշխատելիս կարող է առավել արդյունավետ լինել խմբային աշխատանքի սխեմայի ներմուծումը:

Ուսումնամեթոդական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և փորձի փոխանակում ապահովելու նպատակով ամբիոնում պարբերաբար կազմակերպվել են տարբեր զեկուցումներ, հաղորդումներ, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված քննարկումներ: Իրականացվող գործո-ղությունները կնպաստեն առանձին դեպքերում դեռևս տեղ գտնող թերացումներից ազատվելուն:

Ամբիոնում կարևորվում են նաև ուսանողների հարցման արդյունքների քննարկումները: Ակնհայտ է, և այդ կարծիքները պարբերաբար հնչում են նաև ամբիոնի քննարկումների ժամանակ, որ հարցման արդյունքները ոչ միշտ են արտացոլում օբյեկտիվ պատկերը (մեկ կամ երկու ուսանողի մասնակցությամբ իրականացված հարցումը չի կարող օբյեկտիվ կարծիք ձևավորել): Ամբիոնը առաջարկում է փոխել հարցման մեխանիզմը՝ կարևոր համարելով հարցումն անցկացնել մինչև դասընթացի ավարտը, որը թերևս հնարավորություն կտա խթանելու ուսանողների մասնակցությունը:

Ուսումնական և ուսումնամեթոդական գործունեության շրջանակում ամբիոնի ձեռքբերումների վկայությունն են ամբիոնի անդամների հրատարակած դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները, որոնք հաճախ ստեղծվում են ներամբիոնային համագործակցությամբ, տարաբնույթ վեբինարների և վերապատրաստման դասընթացների մասնակցությունը:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում հրատարակվել է.

Դասագիրք՝ 2

- Ուսումնական ձեռնարկ՝ 3
- Մասնակցություն վեբինարների և վերապատրաստման դասընթացների - 7 (վկայական՝ 5)
- Դասավանդում արտերկրում Erasmus+ ծրագրի շրջանակում – 4
- Զգալի թվով ուսանողների շարժունություններ արտերկրի տարբեր համալսարաններ, այդ թվում՝ ամբիոնի ջանքերով սկզբնավորված նախագծով Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարանում ուսումնառություն:
- Ամբիոնը ընդունել է նաև այցելու պրոֆեսորների Վենետիկի Կա՛Ֆոսկարի, Պյատիգորսկի պետական, Հունաստանի Դեմոկրիտուս համալսարաններից և կազմակերպել նրանց դասախոսությունները ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համար:
- 2023-2024 ուստարվա ընթացքում ամբիոնն ունեցել է նաև այցելու մասնագետ Միացյալ Նահանգներից, որը որպես դասախոսին աջակցող մասնագետ աշխատել է բակալավրիատի 2-րդ և 3-րդ կուրսերի մի քանի խմբում:
- Համաձայն ԵՊՀ-ի և Պյատիգորսկի համալսարանի միջև կնքված համաձայնագրի՝ ս/թ նոյեմբերին ակնկալում ենք 2 այցելու մասնագետների և ուսանողների այցելություն, որի մանրամասները կճշտվեն առաջիկա շաբաթվա ընթացքում:

Ամբիոնի գործունեության մյուս կարևոր դաշտը գիտական և գիտամեթոդական աշխատանքներն են: Այս ոլորտում ամբիոնը զգալի ձեռքբերումներ ունի: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում հրատարակվել են.

- Մենագրություն՝ 2 և 1-ը տպագրության մեջ է
- Գիտական հոդվածներ՝ 42 (որոնցից 2-ը Scopus և 1-ը Web of Science գիտաչափական շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում)
- Գիտական հոդվածներ - շուրջ 12-ը տպագրության մեջ, որոնցից 4-ը Scopus գիտաչափական շտեմարանում ընդգրկված գիտական հանդեսներում)

- Մասնակցություն գիտաժողովների – 17
- Գիտահետազոտական գործուղում Գրայֆսվալդի համալսարան – 1
- Ներկայում ամբիոնն ունի 2 ասպիրանտ, 8 հայցորդ: Ամբիոնը համագործակցում է նաև հանրապետության այլ բուհերի հետ:

Գիտակազմակերպական դաշտում ամբիոնը մեծ ջանքեր է գործադրել գիտական սեմինարների և միջազգային գիտաժողովի կազմակերպման հարցում: Մասնավորապես, ս/թ սեպտեմբերի 19-21-ի ընթացքում իրականացված միջազգային գիտաժողովը, որը նվիրված էր Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հերոսապատումի հրատարակման 90-ամյակին, բավականին ընդգրկուն էր՝ 70-ից ավելի մասնակիցներ, այդ թվում՝ 12 երկրներից ժամանած մասնագետների մասնակցությամբ: Բոլոր մասնակիցները, այդ թվում՝ արտերկրյա, շատ բարձր գնահատականի արժանացրին գիտաժողովը թե՛ գիտական և թե՛ կազմակերպական առումով: Գիտաժողովը չափազանց կարևոր էր ինչպես բարձրացվող գիտական խնդիրների խոր ու համակողմանի լուսաբանման առումով, այնպես էլ հյուրերին մեր երկրի մշակութային արժեքներին ծանոթացնելու տեսանկյունից: Գիտաժողովը շատ լավ հնարավորություն էր նաև մեր միջազգային համագործակցային կապերը ընդլայնելու առումով: Շարունակում են ակտիվ մնալ նաև ամբիոնի գործող միջազգային կապերը Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվ. պետական համալսարանի, Պյատիգորսկի, Վենետիկի Կա՛Ֆոսկարի, Բերգամոյի, Լեհաստանի Յագելիոնյան, Մոնտենեգրոյի համալսարանների հետ: Պլանավորվում է իրագործել նաև Վարշավայի Կիրառական գիտությունների ակադեմիայի հետ համագործակցությունը, որի շրջանակներում ակնկալվում է իրակա-նացնել թե՛ ուսանողների և թե՛ պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրեր:

Բացի մենագրությունների և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակման գործից, որի հետ կապված կատարվում է մեծ ծավալի գրախոսական և խմբագրական աշխատանք, նշվեց, որ ամբիոնը մեծ ակտիվություն է ցուցաբերում նաև Armenian Folia Anglistika գիտական հանդեսի հրատարակման գործում՝ կատարելով և՛ գրախոսական, և՛ խմբագրական բնույթի աշխատանքներ: Գործադրվող ջանքերի շնորհիվ հանդեսի գիտական և հրատարակչական մակարդակը նկատելի առաջընթաց է ապրել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

Գ.Բարսեղյանը ներկայացրեց օրակարգի երկրորդ հարցը՝ 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսանողների հարցման արդյունքների ամփոփումը: Քննարկվեցին տարբեր մոտեցումներ, որպեսզի բոլոր ուսանողները ներգրավվեն հարցմանը, քանի որ մեկ- երկու ուսանողի մասնակցությունը ոչ օբյեկտիվ պատկեր է ստեղծում՝ հետևաբար ակնկալվող արդյունքները ոչ ճշգրիտ են արտացոլում դասախոսի կատարած աշխատանքի համալիր պատկերը:

ԵԼՀ ֆակուլտետի դեկանը ներկայացրեց օրակարգի երրորդ հարցը՝ ուսանողների արտադրական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկումը: Նա խոսքը փոխանցեց փոխդեկան Մ.Յաղուբյանին՝ ներկայացնելու ուսանողների արտադրական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքները: Մ. Յաղուբյանը

նշեց, որ պրակտիկայի պետք է որոշակիորեն համապատասխան թեզի աշխատանքներին: Կրթական ծրագրի ղեկավարները նախորդ տարիներին ապահովել են տվյալ գործընթացի իրականացումը:

Ընթացիկ հարցեր

- ԵԼՀ ֆակուլտետի դեկանը հորդորեց ամբիոնի վարիչներին շարունակել դասալսումները:
- Գ.Բարսեղյանը շնորհակալություն հայտնեց Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս.Գասպարյանին իր ջանքերով կազմակերպած գիտաժողովի համար, որին մասնակցեցին 12 երկրի ներկայացուցիչներ, ինպես նաև Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Գ.Սարգսյանին՝ ֆրանսիական գրականությանը նվիրված գիտաժողով կազմակերպելու համար, իսկ հոկտեմբերի 29-ին նախատեսված է մեկ այլ միջոցառում «Գինին՝ որպես միջմշակութային հաղորդակցության բաղադրիչ տարբեր գիտակարգերի հատույթում»: Գ.Բարսեղյանը շնորհակալություն հայտնեց նաև Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ա. Սեդրակյանին՝ շեքսպիրագիտությանը նվիրված գիտաժողով կազմակերպելու համար, ինչպես նաև Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Հ.Բաղդասարյանին իբերո-ամերիկյան մշակույթին նվիրված միջոցառում կազմակերպելու համար, որին մասնակցեցին դեսպաններ, դիվանագիտական կառույցների ներկայացուցիչներ: Նշվեց նաև, Հ.Բաղդասարյանը նախատեսում է ապրիլին միջազգային գիտաժողով կազմակերպել՝ «Իսպաներենը առանց սահմանների ժամանակի և տարածության մեջ» խորագրով: Հավելվեց նաև, որ նոյեմբերի 4-ին Գերմանական բանասիրության ամբիոնը նախատեսում է համաժողով՝ «Գլոբալ համալեզվություն. գերմաներենի դերը միջմշակութային համատեքստում»:

Միաձայն քվեարկման արդյունքում՝ որոշեցին.

- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ Սիլվա Մարտինի Սուքիասյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«Թոմաս Հարդիի վեպերը նատուրալիզմի և կինոմտածողության տեսանկյունից»,** Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ:
  Գիտական ղեկավար հաստատել **բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արա Հրաչիկի Առաքելյանին:**

- Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնում Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ 2025-2026 ուստարում ասպիրանտուրա ընդունվելու նպատակով հայտ ներկայացրած Լիլիթ Արսենի Մանուչարյանի հետազոտության ընդհանուր թեման՝ **«Դիստոպիկ միտումները 21-րդ դարի անգլո-ամերիկյան արձակում»**: Գիտական ղեկավարի թեկնածու՝ **բան. գիտ. թեկնածու, դոցենտ Նատալյա Կարենի Գոնչար-Խանջյան:**
- Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնում Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ 2025-2026 ուստարում ասպիրանտուրա

ընդունվելու նպատակով հայտ ներկայացրած **Անի Արամի Նազարյանի** հետազոտության ընդհանուր թեման **«Եվրոպական առասպելաէպիկական ավանդույթը և Ջոն Ռ. Ռ. Թոլքինի գրական ժառանգությունը»** :
Գիտական ղեկավարի թեկնածու՝ **բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արա Հրաչիկի Առաքելյան:**

- Հաստատել Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնում Ժ.02.07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ 2025-2026 ուսումնական տարում առկա ուսուցման ասպիրանտուրայի անվճար համակարգ ընդունվելու նպատակով հայտ ներկայացրած Կիրառական լեզվաբանություն մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող **Սյուզաննա Խաժակի Սարդարյանի** հետազոտության ընդհանուր թեման՝ «Բազմաեղանակայնությունը՝ որպես զբոսաշրջության դիսկուրսի արդյունավետությունը բարձրացնող գործոն»: Գիտական ղեկավարի թեկնածու՝ բ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սեդա Քերոբի Գասպարյան:
- Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Ղուկասյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել հետևյալ ձևակերպումով. «Դիվանագիտական դիսկուրսի ոճական և գործաբանական բնութագիրը»:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

28.10.2024թ.